ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0025, ք. Երևան, Նալբանդյան 130, հեռ. 010-596-125

№ 12/298

«30» 09 2025 թ.

«Գագիկ Սարգսյան» ԱՁ
(ՀՎՀՀ 25424907)
ՀՀ Ք. Երևան, Տիգրան Մեծ 46
էլ. հասցե՝ ersarprint@mail.ru

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը միակողմանի ամբողջությամբ լուծելու մասին

ՀՀ ներքին գործերի նախարարության (Այսուհետ՝ Գնորդ) և «Գագիկ Սարգսյան» ԱՁ-ի (Այսուհետ՝ Վաճառող) միջև 01.07.2025թ. կնքված ՀՀ ՆԳՆ ԳՀԱՊՁԲ-2025/Ա-88 ծածկագրով գնման պայմանագրի 1.1-րդ կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված և նույն ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող գնահատված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար: Պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագրի համաձայն՝ մասնակիցը մատակարարման փուլում պետք է մատակարարեր թվով 100 հատ խորհրդանշական նվերներ:

Ըստ պայմանագրի՝ նշված ապրանքը պետք է մատակարարվեր մինչև 2025 թվականի հուլիսի 31-ը, սակայն վերջինս մատակարվել է 2025 թվականի սեպտեմբերի 8-ին, իսկ այնուհետև թերությունների շտկման նպատակով՝ 2025 թվականի սեպտեմբերի 24-ին: Արդյունքում ապրանքը մատակարարվել է անպատշաճ որակի, ինչը չի համապատասխանում պայմանագրով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագրին:

Պայմանագրի 2.1 կետի 2.1.1 ենթակետի համաձայն՝ ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի և 2.1.2-րդ ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք, ապա պատվիրատուն իրավունք ունի չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը:

Պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն՝ պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Պայմանագրի 2.1.7.1-րդ կետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

Վերոնշյալով պայմանավորված՝ Վաճառողը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները, այն է՝ ապրանքը մատակարարել է Պայմանագրի թիվ 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագրին անհամապատասխան:

Համաձայն ՀՀ կառավարության 2017թ.-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 4-րդ ենթակետի՝ պայմանագիր կնքած անձի (կատարողի) ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պայմանագրով սահմանվում են տույժեր և տուգանքներ: Տուգանքի չափը չի կարող պակաս լինել պայմանագրի ընդհանուր գնի 0,5 տոկոսից:

Համաձայն Պայմանագրի 2.1.7-րդ կետի Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Մատակարարը էականորեն խախտել է Պայմանագիրը: Մատակարարի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ մատակարարված ապրանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին կամ/և մատակարարը խախտվել է ապրանքի մատակարարման ժամկետը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ.-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 17-րդ ենթակետը և Պայմանագրի 8.9-րդ կետը՝ ՀՀ ներքին գործերի նախարարությունը միակողմանի ամբողջությամբ լուծում է ՀՀ ՆԳՆ և «Գագիկ Սարգսյան» ԱՁ-ի միջև կնքված թիվ ՀՀ ՆԳՆ ԳՀԱՊՁԲ-2025/Ա-88 ծածկագրով Պայմանագիրը: Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Պայմանագիրը կհամարվի միակողմանի ամբողջությամբ լուծված՝ սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

«Գագիկ Սարգսյան» ԱՁ-ին տրվում է 5 օրացուցային օր 19510.72 /տասնինը հազար հինգ հարյուր տաս դրամ և յոթանասուներկու / ՀՀ դրամ տույժը և 5002.75 /հինգ հազար երկու դրամ և յոթանասունհինգ լումա/ ՀՀ դրամ սահմանված տուգանքը և ՀՀ ՖՆ գործառնական վարչության 900005028106 հաշվեհամարին վճարելու համար, ինչպես նաև տուժանքի մասին համաձայնագրերով սահմանված գումարներից որպես որակավորման ապահովման գումար 300 000 /երեք հարյուր հազարն/ ՀՀ դրամ և պայմանագրի ապահովման գումար 200 000 /երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ փոխանցել ՀՀ ՖՆ գործառնական վարչության համապատասխանաբար N 900008000698 և 900008000664 հաշվեհամարներին:

Վճարման կտրոնների բնօրինակներն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ ՆԳՆ, ք. Երևան Նալբանդյան 130 հասցեով:

Սահմանված ժամկետում գումարները չվճարելու դեպքում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ. ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով՝ «Գագիկ Սարգսյան» ԱՁ-ի տվյալները կներկայացվեն լիազոր պետական մարմին:

Ա. ՖԻԴԱՆՅԱՆ

Գնումների համակարգման բաժին
Կատ.՝ Ա. Սարգսյան
Հեռ. /010/ 59 61 52